Արձանագրություն N 4
«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/95» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստ

ք. Երևան

19.03.2020թ.
Ժամը՝ 15:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Բաղդիշյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Ալոյան /գնահատող/, Ա. Սիմոնյան /գնահատող/, Ջ. Հովհաննիսյան /բացող/, Մ. Մանուկյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Եղիազարյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/95» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում անցկացվող բանակցությունների մասին

(Ա. Բաղդիշյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/95» ծածկագրով գնման ընթացակարգի ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցները հրավիրվել էին գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների: <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն գների նվազեցման շուրջ անցկացվող միաժամանակյա բանակցություններին ծանուցված մասնակիցներից մասնակցել է Վեգա Ուորլդ ՍՊԸ-ն: Մասնակիցն իր վերջնական գնային առաջարկները ներկայացրել է էլեկտրոնային փոստի միջոցով, սակայն դրանք կրկին գերազանցում են մեր նախահաշվով սահմանված գները:

1.2 1-ին չափաբաժնի մասով գնային առաջարկը նվազեցրեց 45000 /քառասունհինգ հազար/ ՀՀ դրամով՝ կազմելով 1050000/մեկ միլիոն հիսուն հազար/ ՀՀ դրամ: 2-րդ չափաբաժնի մասով գնային առաջարկը նվազեցրեց 90000/իննսուն հազար/ դրամով, կազմելով՝ 630000 /վեց հարյուր երեսուն հազար / ՀՀ դրամ:

1.3 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/95» ծածկագրով գնման ընթացակարգը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով հայտարարվել է չկայացած՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի /հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին/:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/95» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ա. Բաղդիշյան)

Հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցում գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
ԱՐԱՐԱՏ ԲԱԴԱԼՅԱՆ ՍԵՐԳՈՒՇԻ Ա/Ձ	Բավարար
Վեգա Ուորլդ ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/95» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի որոշման մասին

(Ա. Բաղդիշյան)

3.1 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/95» ծածկագրով գնման ընթացակարգի **3-րդ և 4-րդ** չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել **«Վեգա Ուորլդ» ՍՊԸ**-ին, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Բաղդիշյան)

4.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը՝
Երևանի քաղաքապետարանի կարիքների համար **սոցիալապես անապահով ընտանիքներին տոնական և հիշատակի օրերին աջակցման նպատակով կաթսաների կոմպլեկտի** ձեռքբերման պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել վերը նշված մասնակցին:

4.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետը հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ հինգ օրացուցային օր:

4.3 Անգործության ավարտից հետո ընտրված մասնակիցներին ներկայացնել պայմանագրի նախագիծը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

5. Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշում

(Ա. Բաղդիշյան)

5.1 Հաստատել «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/95» ծածկագրով գնման ընթացակարգը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի Նախագահ՝	_____	Ա. Բաղդիշյան
	_____	Ա. Ալոյան
	_____	Ա. Սիմոնյան
Անդամներ՝	_____	Ջ. Հովհաննիսյան
	_____	Մ. Մանուկյան
Համակարգող՝	_____	Ս. Եղիազարյան